

Հասարակութիւն Բուրձաշէն գեղջ . . . 3
 Հասարակութիւն Պալխանց գեղջ . . . 4
 Հասարակութիւն Գոմ գեղջ . . . 4
 Կարապետ Բաճ. Դաւթեան Արակովայ գեղջ 3
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 4
 Պետրոս Բաճ. Կորխ գեղջ . . . 4
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 4
 Դաւիթ քաճ. Սրճայ գեղջ . . . 4
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 4
 Վարդան Բաճ. Տ. Ստեփաննեան Խատայ գեղջ 3
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 4
 Կարապետ Բաճ. Յարութ. Մաճատեայ գեղջ 4
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 3
 Հասարակութիւն Օլավէրտ գեղջ . . . 5
 Յարութիւն Բաճ. Բղաւէթ գեղջ . . . 4
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 4
 Զարարիայ Բաճ. Ապալ գեղջ . . . 4
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 6
 Մելքոն Բաճ. Տէր Մկրտչեան Փօկայ գեղջ 4
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 4
 Գրիգոր Բաճ. Տ. Ազարեան Գանձայ գեղջ 4
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 7
 Հասարակութիւն փոքր և մեծ Արակել գեղջ 5
 Գրիգոր Բաճ. Տ. Գէորգեան և Ստեփաննոս
 Բաճ. Տ. Ստեփաննեան Սաթղայ գեղջ . 6
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 6
 Մակար Բաճ. Պատասեանց Օրօճար գեղջ . 3
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 3
 Հասարակութիւն Աւորմայ գեղջ . . . 2
 Աւետիս Բաճ. Տ. Յովհ. Զփկրաշէն գեղջ 7
 Հասարակութիւն Նոյն գեղջ . . . 5

(Շարունակ):

Խմբագրութեան Արարար Ամսագրոյ

Ուղարկելով սորա հետ իմ արած դիմումներէն
 ք. Յովսէփ Աւագ քաջանայի Օրբելոյ աշխա-
 տասիրած «Դասատետր եկեղեցական պատմու-
 թեան վրայ», խոնարհարար խնդրեմ՝ հրատարա-
 կել զայն «Արարատ» ամսագրի միջոցով:

Ստեփաննոս Ա. Վ. Մանդլինսկանց

29 Սեպտեմբերի 1874 -օր

Բեռլին:

(Անկողմնակալ ոգւոյ սէրը պարտք կը
 դնէ մեր վերայ՝ յաջերգ ամսագրոյ կրօնա-

կանին մէջ հրատարակել բարեկր. Ման-
 դինեանց Աւագ Վաջանայի զխտոզու-
 թիւնքը):

ՄԵԾ. ՄՈՎՍԷՍ Յ. ԱՌԻՂԱՆԵԱՆՑ

Խմբագրութեան Արարար Ամսագրոյ:

Հոգարարձութիւն Ատրախանայ Հայոց ծխա-
 կան երկեսն Հոգևոր Դպրոցաց շնորհ ունի խոնար-
 հարար խնդրել ի խմբագրութենէ՝ հրատարակել
 յընդհանուր գիտութիւն ազգայնոց զհետեւեալ
 յօդուածն միջոցաւ Արարատ ամսագրոյ:

Հոգարարձութիւն Աւագ Բաճեանց, Յովսէփ Բաճեանց:

Ստեփան Պօպօվսկանց:

Գրիգոր Ստեփաննեանց,

Յովսէփ Աւագեանց:

Ի 7 Սեպտ. 1874 -օր

Արարիւն:

Ատրախանայ Հայ Մովսէս Յովսէփեան Աուր-
 ղանեանց ի ցոյց Բրիտանական սիրոյ և Ազգա-
 յին ջերմեռանդութեան յայտնեաց Հոգարարձա-
 կան ժողովոյ Ատրախանայ Հոգևոր երկեսն Դպր-
 րոցաց՝ թէ ցանկայ նուիրել զգատարկ գետին եր-
 կարութեամբ և լայնութեամբ քսան ուսաց սա-
 ժեմիւ յօգուտ և ի վայելս Օրիորդական Հոգևոր
 Դպրոցի, զյետնամնացեալն ինքեան իբրև ժառան-
 գի զկնի մահուան հօր իւրոյ Ատրախանայ Հայ
 Յովսէփայ Մովսէսեան Աուրղանեանց, և զկնի
 ընդունելոյ Հոգարարձական խորհրդարանի զնորայն
 Ազգասիրական յայտարարութիւն, նա պարոն
 Մովսէսն Աուրղանեանց ընդ գրութեան ի 31 յու-
 լիսի տարւոյս առաջի արար պատկանաւորն մա-
 կագրութեամբ զկալուածագիր նշանակեալ ի վեր
 անդր գատարկ գետնոյ, այնու դաշամը՝ զի գտե-
 ղին այն չունիցի որ իրաւունս վաճառել, այլ ի
 ժամուն կառուցի անդ Օրիորդական Դպրոց ի
 յիշատակ բոլոր սերնդոց նորա Հոգարարձութիւն
 Դպրոցաց մեծաւ յարգանօք ընդունելով զխնդիր
 պարոն Աուրղանեանցի զոյգ ընդ կալուածագրոյ
 նուիրեալ գետնոյ՝ կարգաւորեաց առնել զարժա-

նաւորն տնօրէնութիւն համաձայն բաղձանաց նուիրատուին, և դասելով զանուն նորա ի թիւս բարերար Անդամոց Օրիորդական Գպրոցի՝ գրութեամբ ի 11 Օգոստոսի համարաւ 135, յայտնեաց նմա զգոհունակութիւն ի դիմաց իւրոց առ այս օրինակ ազգօգուտ նուիրագործութիւն նորաւ ԵՂ որովհետեւ յիշեալ պարոն Ղուրդանեանցն ի վեր քան զնիւթական կարօղութիւն իւր ջերմաջերմ փափաղանօք եջջոց զիւր զհամակրութիւն բաղմակարօտ Օրիորդական Գպրոցի Հայոց քաղաքիս, վասն որոյ Հոգարարձութիւն Գպրոցաց անժխտելի պարտաւորութիւն համարէ ինքեան՝ զնորին ազգօգուտ նուիրագործութեանն միջոցաւ Արարատամագրոյ հրատարակել յընդհանուր գիտութիւն համազգեաց, զի և կարողքն և փարթաւքն ընչիւք ի միջի ազգիս՝ հետեւեցին նախանձելի օրինակին այնորիկ, դարձուցանելով զուշ և զբաղցրակնարկութիւն և զհամակրութիւն իւրեանց յԱզգային երկսեռ Գպրոցս, որոց բարեկարգ և յարատեւ ընթացք միայն կարեն յառաջագէմ կացուցանել զազգ մեր և ի ժամուն պատրաստի ունել վասն ապագայի զխելոցի և զհամաճարաւոր ծնօղս և զուսուցիչս ի բարեք դաստիարակութիւն մատաղ սերնդոց:

Յ. Սարգսեանց

(Եյս առթիւ Արարատն ևս կրփութայ իւր շնորհակալութիւնը հրապարակաւ մատուցանել Մեծաւպատիւ Մովսէս Յովսէփեան Ղուրդանեանցին, միանգամայն կր զովէ նորին ազնիւ զգացմունքը և բարի և օգտաւէտ նպատակը):

ԲՈՂՈՔ Ի ԷՈՒՇԻՈՅ

(Հետեւեալ գրութեան հրատարակութիւնը անկողմնակալ ոգւով խնդրուած է ի մէնջ):

Խօսեալքոն-իւն Արարատ ամառոց:

Ճշմարտութիւնը ինձ վրայ անհրաժեշտ հարկ կզնէ Մեղու Հայաստանի տարւոյս Յուլիս 31 ին 29րդ համարաւ Ղարաբաղու Ազգային Հոգեւոր

Գպրոցին դէմ հրատարակուած նամակին ծայրալիւր ստուծիւնները յայտնել, որով և յայտ յանդիման ծանուցանել կեղծ նամակագրի դաւաճանութիւնը և մանաւանդ գպրոցիս բարեկարգութիւնը, նախ՝ պարոնը ըստ իւր գրութեան ժամցին գպրոցը կմտնէ, վարժապետները չի գտնում, և աշակերտները անկարգ դրութեան մէջ կտեսնէ: Ըստ ամենայնի սուտ և խարդախութիւն է. վասն զի ժամ եօթէն սկսեալ գպրոցիս վերակացուն անխափան աշակերտաց վրայ գտնուելէն և համեստ կացութեամբ նրանց իրենց օրական դասերու աշաւորջ հսկողութեամբ պարապեցնելէն զկնի, նաև գպրոցիս վարժապետներէն մէկը, որն որ նոյն իսկ գպրոցին մէջ բնակութիւն ունի, առաւօտեան սահմանեալ ութերորդ ժամէն երկու և շատ անգամ երեք ժամ յառաջ գպրոցը կը մտնէ, և դասատուութիւն կսկսի. և այս ուրանալ հոգին սուրբ հայհոյել ասել է: Արեւմեկթէ գպրոցիս մէջ այս ժամերին երկու վարժապետ պատրաստ կգտնուի, և ժամ ութին բոլոր վարժապետները, որոնք ոչ երբէք կարող են ուշանալ: վասն զի ոռճիկներէն կհանուի, ուզողը ստուգել թող գպրոցական օրագրութիւնը զննէ. ուր մնաց իններորդ ժամը, յորում պիտի տեղի ունենար նամակագրի հնարած ստուծիւնները. մանաւանդ որ անցեալ տարի սեպտեմբերէն ըսկսեալ գպրոցիս նպատակներէն գերագոյն համարուեցաւ աշակերտները բարոյապէս զարգացնել և սրբել այն զեղծմունքները, որ 1884 թուէն թագաւորած էր գպրոցիս մէջ. և գպրոցս հասած է այս տարի այս առաքինական նպատակին. թող խարդախ գրիչները ինչ կուզեն բաղաչեն. ճըշմարտութիւնը ակներե է և անվկանդ: Երկրորդ՝ գպրոցիս մէջ ոչ թէ միայն այս տարի, այլ և իւր սկզբնաւորութենէն ի վեր Չամչեան քերականութեան դասատուութիւն տեսնուած չէ երբէք, այլ մինչև անցեալ տարիները Սալլանդեանի քերականութիւնն էր, որոյ վրայ դասատուութիւնն ապարդիւն լինելու համար վերացաւ, և նորա վարժապետն իւր հայերէն լեզուի և մանաւանդ դասատուութեան անհմտութեան պատճառաւ արձակուեցաւ, և նորա տեղ սահմանուեցաւ նոր ոճով և գրաւոր կրթութեան լեզուի դասախօ-